

Հաստատված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի 2023թ. նոյեմբերի 24-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝ Ե.Ս.Անդրեան



Հիմք՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի 26.12.2019թ. նիստում հաստատված ՇՊՀ-ի «Գիտական քննարկականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի» կանոնադրության լրամշակված տարբերակը

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) Որակի ապահովման բաժնի (այսուհետ՝ Բաժին) կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) սահմանում է Բաժնի կառավարումը և գործառույթները:

1.2 Բաժինը Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր գործունեությունն իրականացնում է համաձայն ՀՀ օրենսդրության, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Կրթության մասին» ՀՀ օրենքների, «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին ՀՀ կառավարության 2011 թ. թիվ 959-Ն որոշման», «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2011թ. թիվ 978-Ն որոշման», «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը» հաստատելու մասին ՀՀ

կառավարության 2016 թվականի թիվ 714-Ն որոշման», ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության այլ նորմատիվ իրավական ակտերի, Համալսարանի կանոնադրության, Համալսարանի Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումների, ռեկտորի հրամանների, սույն Կանոնադրության և այլն:

1.3 Բաժնի գտնվելու վայրն է ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Պ. Սևակի 4, Հիմնադրամի վարչական շենք:

1. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2.1 Բաժինը ղեկավարում է բաժնի պետը, ում նշանակում և պաշտոնից ազատում է Հիմնադրամի ռեկտորը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն:

2.2 Բաժնի պետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Հիմնադրամի ռեկտորին, հաշվետու է Հիմնադրամի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-սոսթենին, պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարին:

2.3 Բաժնի պետի և աշխատակիցների իրավունքները, պարտականությունները և գործառույթները սահմանվում են Հիմնադրամի ռեկտորի հետ կնքվող աշխատանքային պայմանագրերով, վերջիններիս կից պաշտոնների նկարագրերով և այլ ներքին իրավական ակտերով:

2.4 Բաժնի աշխատակիցներն անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնիպետին:

2.5 Բաժնի պետի բացակայության դեպքում նրա գործառույթները ժամանակավորապես կարող է իրականացնել Հիմնադրամի ռեկտորի հրամանով նշանակված անձը:

2. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Բաժինը.

3.1 Հիմնադրամի Զարգացման ռազմավարական ծրագրի հաստատումից հետո, վերջինիս համապատասխան՝ ըստ վերաբերելիության, մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում իր հնգամյա և դրանից բխող ամենամյա աշխատանքային ծրագրերը:

3.2 Հիմնադրամի Զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներին համապատասխան՝ մշտադիտարկում և գնահատում է կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի ապահովման գործընթացը:

3.3 Մշակում և պարբերաբար վերանայում է Հիմնադրամի որակի ապահովման և կառավարման քաղաքականությունն ու հայեցակարգը:

3.4 Մշակում է որակի ներքին և արտաքին ապահովման պետական և միջազգային չափորոշիչներին համապատասխանող իրավական նորմատիվ ակտերի նախագծերը:

3.5 Համապատասխան ստորաբաժանումների հետ մշակում է Հիմնադրամի որակի ապահովման կանոնակարգային, ընթացակարգային, չափորոշչային փաստաթղթերը:

3.6 Տարածում և բարելավում է Հիմնադրամում որակի մշակույթը:

3.7 Կազմակերպում և համակարգում է Հիմնադրամի որակի ապահովման գործընթացները, նպաստելով որակի շարունակական լավարկմանը և կայունությանը, ապահովում է դրանց արդյունքների մասին հաշվետվողականությունը:

3.8 Ապահովում է Հիմնադրամի որակի ապահովման ու կառավարման գործընթացների թափանցիկությունը, ինչպես նաև դրանցում արտաքին ու ներքին շահակիցների փոխգործուն մասնակցությունը:

3.9 Ապահովում է Հիմնադրամի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում որակի ապահովման ու կառավարման գործընթացների ներդաշնակեցումն ու իրականացումը:

3.10 Պլանավորում, կազմակերպում, վերահսկում և գնահատում է ամբիոնների որակի ապահովման պատասխանատուների աշխատանքը:

3.11 Գնահատում է կրթական ծառայությունների արդյունավետությունը, կատարում է կրթության որակի մշտադիտարկում, մշակում է կրթության որակի գնահատման գործիքակազմը, ընթացակարգերը և չափանիշները, ինչպես նաև կատարված հետազոտությունների արդյունքները ներկայացում է Հիմնադրամի ռեկտորին:

3.12 Իրականացնում է Հիմնադրամում ընթացող ուսումնական և այլ գործընթացների արդյունավետության և որակի բարձրացմանն ուղղված հետազոտություններ և վերհանում խնդիրները:

3.13 Համակարգում է Հիմնադրամի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումների ինքնագնահատման գործընթացը, ապահովում է համապատասխան զեկույցի պատրաստումն ու հաջորդող գործողությունների իրականացումը:

3.14 Հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ համակարգում է Հիմնադրամի ստորաբաժանումների աշխատանքների ներդաշնակեցումը:

3.15 Ապահովում է Բաժնի գործունեության արդյունքների հաշվետվողականությունը ՇՊՀ-ի ռեկտորի, ներքին և արտաքին շահառուների և շահակիցների առջև:

3.16. Ապահովում է փոխշահավետ համագործակցություն «ՀՀ մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի, որակիապահովման տարածաշրջանային և միջազգային գործակալությունների և մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման կենտրոնների հետ:

3.17. Բաժնի գործունեության մասին Հիմնադրամի պաշտոնական կայքէջում տեղադրվող տեղեկատվության պարբերաբար թարմացման նպատակով Հիմնադրամի Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի համապատասխան մասնագետին տրամադրում է անհրաժեշտ նյութեր:

3.18 Հիմնադրամի ներքին իրավական ակտերով պայմանավորված այլ գործառույթներ:

4. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Կանոնադրությունը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հաստատում է Հիմնադրամի Գիտական խորհուրդը:

4.2 Սույն Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից: